ՄԱՐԶԻ ՍԵՄՅՈՆՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1, 77^2, և 77^3 հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Սեմյոնովկա համայնքի ղեկավարին՝

1) ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերն ուղարկել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման.
2) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերը համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ, 40-րդ, 41-րդ հոդվածների պահանջներին.
3) ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2006թ. դեկտեմբերի 1-ի N 10 որոշումը.
4) ընդունվող իրավական ակտերում կատարվող փոփոխությունները և (կամ) լրացումներն իրականացնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի հիման վրա.
5) ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթով հաստատել և գործողության մեջ դնել համայնքային ծառայության մրցութային և

ատեստավորման հանձնաժողովների նոր խմբագրությամբ աշխատակարգերը.

6) աշխատանքներ տանել հողի հարկի, հողերի վարձավճարների ապառքների կրճատման և աշխատավարձերի նախորդ տարիների պարտքերի մարման ուղղությամբ.
7) համայնքային սեփականության հողերի վարձակալության տրամադրումը իրականացնել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջներին համապատասխան.
8) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև 2012թ. հունվարի 20-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ